

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԵՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՄԸ ԱՆՈՒԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՄԵՏԱՅԼՆԵՐՈՒ ԱՌԹԻՒ



Ափսո՛ս քեզ, հայոց խեղճուկ ժողովուրդ,
Յիր ու ցան եղաք անմեղ, անխորհուրդ,
Գերի գնաման աք գլխի խորասան,
Քաղցած ու ծարաւ, տկուր, Թշուաւական.

Էս սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղաքներն,
Քաղցրիկ ջրերըն, ձեր շէն գեղերըն,
Ո՛ւժըն էք Թաղման, դուք որ վնաման աք. . .

. . . Մասիսի անունն, Նոյայ տապանը,
Արարատ դաշտի, սուրբ Էջմիածնի,
Մեր խոր վիրապի, Սուրբ Գեղարդ Մուղնի
Չըմուռն՝աք մինչի օրն դատաստանի. . .

Ս՝ ՎՐԿ՝ ԶՈՒՂԱՅԵՑԻ

1921-ի գարնան, Ֆլորանս գտնուած միջոցիս, Պարճելլօի թանգարանին մէջ ուշադրութիւնս գրաւեցին փաթթոցաւոր զէմքեր կրող մետալլներ, որոնց երկուքը հայերէն արձանագրութիւն ունէին և երրորդ մը՝ լատիներէն: Ֆլորանսցի ազնիւ բարեկամներ ինձի հայրժայթեցին ատոնց լատինարները¹, լատիներէն արձանագրութիւն ունեցողը Սուլթան Սէլիմ Ա.ի պատկերը կը կրէր և Եղիպտոսի գրաւման ի յիշատակ յօրինուած էր: Ատիկա միակ վաւերական դիմանկարն է ամենի աշխարհակալին և զայն հրատարակած և՛ **Syria** հանդէսին մէջ²:

Հայկական մետալլները մէջտեղ կը գնէին սակի պատարարուծելի խնդիր մը: Երկուքն ալ՝ իրենց երեսի կողմը կը կրէին կենդանագիր

Մը, — մէկուն վրայ՝ իրանը միայն, միւսին՝ ամբողջ մարմնով, — և յետակողմը՝ համանման նշանակներ. ևղբքներուն վրայ բոլորաձև զրոյժուած են արձանագրութիւններ որ նոյնն են մէն մի կողմ:

Անձնաւորութեան գլուխը, խորշոմներով բռնաւոր, ճակատէն տեսնուած կը ներկայանայ, — իրանը միայն ցոյց աւելող մետալլին վրայ՝ քիչ մը քսվընալի ծած, — շեշտուած դիմազծերով ո՛ր յտաջակարկառ քիթով: Երեսը՝ ամ իլուած, թևթև ընչացքով: Կորովի ու խիստ արտայայտութիւն մը ունի: Հազած է մուշտակէ օձիքով վայելուչ վերարկու մը, պօսիով մը մէջքը սեղմուած, և սրուն քղանցքները գանդակաձև կ'ընդլայնին: Թիկնոց մը որ ձախ կողմ կը կոճկուի՝ ըստ պարսկական սովորութեան, կը տեսնուի վերարկուին ներքև: Աջ ձեռքով համբիշ մը կը գարձընէ, մինչ ձախ աղբրին կը կրթնի:

Այսպէս է պատկերացուած դիմանկարը, ուր աչքի կը գարնէ նաև մեծազանդուած փաթթոց մը:

Յետակողմին վրայ կ'երևան չորս նշանակներ: Գառն Աստուծոյ, որուն կ'ակնարկէ արձանագրութիւնը և որ կեղբոնը զետեղուած է, ամէնէն կարեօրն է: Ս. Հոզույն ազանին քրիստոնէական երկրորդ նշանակն է հոն: Վեր բարձրացող առիւծ մը և արևը՝ Պարսկաստանի զինանշանը կ'ողեն: Վերջապէս, մեղուներու պարս մը որ կը թռչի գէպ ի ինչ որ փեթակ մը պէտք է ըլլայ, ըստ ամենայն հաւանականութեան՝ աշխատանքի և գործունէութեան այլարանութիւն մը կը ներկայացնէ:

Դժբաղդարար ինձի անհնար եղաւ ամբողջապէս քակել արձանագրութիւնը: Երեսակողմը, «ևս և՛ ծառայ Յիսուսի Քրիստոսի» բանաձևէն զատ, կը կարդամ «Ջուղացի» բառը, ինչպէս և «Գրիգորը (այսպէս) . . . էնց Գէրաքի» անունը: Հօրենական անուն մը, որուն միայն

1. Թող Պ. ճ. ալ Ներբուա, Ֆլորանսի Ազգային Մուսէանին անորէն, շնորհակալութիւններս բնօրինի այդ լատինարները հանել տող հաճած ըլլալուն համար:

2. Syria, 1925, պրտի Գ:

3. Ատոնց մէկուն արտագիրը 52 և միւսինը 50 էջ հաղորամէթը է:

վերջաւորութիւնը էնց կը տեսնուի, զրուած է «Գրիգոր» ծննդեան անունին (ուր «Գրիգոր» սխալ ձևով գրուած է), և «Գէրաքի» ծագման վայրի անունին միջև: Այդ անունը կը սերի այժմեան Քերէքէն, որ Պաղեստինի մէջ գիւղ մըն է, Յորդանանի ձախ եզերքին վրայ: Հոն կար տեսնով Հայկական Հին զաղութ մը՝ արդարեւ 1830 ին, Կիլիկիոյ Լեոն Գ. Թագաւորը «Քարաք գիւղի եկեղեցւոյն կը նուիրէր Յայսմաւուրք մը՝ իր ինքնագիր յիշատակարանով¹:

Յետապիւղովին վրայ կ'երևայ «Յիսուս Քրիստոս, Գառն Աստուծոյ որ շնորհեց ամենայն երկրի» պարբերութենէն յետոյ, Հայկական տամարի 112² տարեթիւը, որ կը համա-

նարգէն իսկ անոնց վրայ մասնանի: Ըրինք առիւծն և արևը, Պարսկաստանի այդ հինաւուրց սղգային գինանշանը:

Նոյն իսկ Եթէ նկատի շտանենք Ջուղայի անունը զոր արձանագրութեան վրայ կը գտնեմ, այն գերակշիռ դերը զոր այդ քաղաքին Հայ վաճառականները ամբողջ 17րդ-դարուն կատարած են Եւրոպայի հետ Պարսկաստանի ունեցած առևտուրին մէջ, կը մղէ այս մտաւայններուն տէրը (անուանակիրը) փնտռել Սպահանի հոշակաւոր Հայկական արուարձանին վաճառականներուն մէջ:

Եթէ ճանապարհորդներ, ինչպէս Տէլլա Վալլէ և Թալերնիէ, մեզի հասցուցած են ա-



պատասխանէ Քրիստոսի թուականին 1672-73 տարւոյն:

Ներկայացուած անձնաւորութեան Հաղուածքը փէ. դարու պարսկական զգեստաւորման կը մօտենայ, ինչպէս կը տեսնենք օրինակի Համար Ժ.Պ.Թալերնիէի³ կենդանագրին վրայ,

նունները Ջուղայի վաճառականական գասուտաջին պեաերուն, ինչպէս Պօճա Աէֆէր և Պօճա Նադար, կամ ասոնց որդիներունը⁴, այդ

1. Գարեգին վարդապետ Յովսէփեան, Գրչագրութեան արուեստը իբն Հայոց մէջ, մասն Գ., Քարտէսիայ հնագրութեան. Վաղարշապատ, 1913: § և պատկեր 129:

2. Այս տարեթիւին մէջ, Էրբորդ տաւր, որ տասնականները ցոյց կուտայ, լատինական Լ ի մը ձևն ունի. ան այնուց Հայկական Ի ին տեղ գործածուած ըլլալու է, որուն թուական արժէքը կը համապատասխանէ քսանի:

3. Իր վեց ճանապարհորդութեանց սկիզբը, տպագրութիւն 1712-ի, պատկերին սակ րացատրուած է թէ «Պարսից թագաւորն իրեն նուիրեց այդ պարսկական Հաղուտար. ուրեմն Հանդիսական զգեստ մըն է:

1. Տէլլա Վալլէ կուտայ անունները Պօճա Աէֆէրի երեք որդիներուն, Մելէք տղա, Ֆրանիլու և Սուլթանում, այս վերջիններուն և ասոնց հօրեղբոր Պօճա Նադարի Ծահ Արբաս աստիճի կողմէ ընդունուելուն առթիւ. Նայն գործ, 3րդ մաս, էջ 108: Թալերնիէ Ծահ Արբաս Բ.ի Ջուղայ ըրած այցելութեան մը տոթիւ կը յիշատակէ Պօճա Սաֆարը, որդի և յաջորդ վաճառականապես Պօճա Նադարի. Ժ.Պ.Թալերնիէի վեց ճանապարհորդութիւնները թուրքիա, Պարսկաստան և Հնդկաստան, Փարիզ 1713, հատար Բ., էջ 157-158: Թալերնիէ կ'աւելցնէ թէ ինչ որ մասնաւորապէս կը մղէ Ծահերը Ջուղայի Հայոց եկեղեցին այցելելու, փախաբն է տեսնելու Հայոց հինները որ բաւական զեղեցիկ են: Պօճա Սաֆար վաճառականապէսին կնոջ մեծ զեղեցիութիւնը եղած էր Ծահ Արբաս Բ.ի այցելութիւններու միակ զրգիչ պատճառը:

անուններէն ոչ մէկը երկու մետայններուն անունին հետ չի համաձայնիր: Սուտի Յ. Տէր-Յովհաննանցի Զուլայի Հայոց նուիրուած և Զուլայի մէջ իսկ հրատարակուած գեղեցիկ ուսումնասիրութեան¹ շնորհիւ է որ կարողացայ այդ մետայններուն վրայ ներկայացուած անձին ինքնութիւնը որոշել:

Այդ հեղինակը կը յիշատակէ արդարև Գէրաք աղայի մը անունը. «Գէրաք որդի Յակոբայ երևելի էր ի վաճառականութեան, որոյ աուրհատութեանն բարուի ձգեալ կայր յԵւրոպա և ի կողմն Աստրախանայ և Գիլանայ»: ² Այս Գէրաքը «Ժողովրդական» մըն էր Ս. Աստատուածածնի Եկեղեցւոյն զոր նորոգել տուած էր: Տէր-Յովհաննանց անոր կողմէ եկեղեցւոյն

րաք աղա, ճշտելով հանգերձ անոր սղգաւ Հայ և ծագմամբ Գէրաքեցի ըլլալը. չիրմին հանգիւպողներէն կը հայցէ «Լի բերանով սղորմի» մը և կը կրէ հայկական տամարի 1157 տարեթիւը որ կը համապատասխանէ 1708-ի:

Ոչ միայն անունի նոյնութիւն¹ կայ, այլ տապանագրին թուականը այս նոյնացման չի հակասեր, բոտ որում մետայններուն վրայ ներկայացուած անձը 1673 ին 40 տարեկան մը կ'երևայ: Իր առևտրական գործունէութիւնը ուրեմն Շահ Աբբաս Մեծի (մեռած 1629 ին) յաջորդներուն շրջանին կը պատկանի ամբողջապէս²:

Գարձեալ Տէր-Յովհաննանցի թանկագին մենագրութեան կը պարտինք քանի մը լրացու-



տրուած նուէրներուն մէջ կը յիշէ երկու նկարներ զոր վեհնեալիկի մէջ նկարել տուած էր և որ այդ եկեղեցւոյն պատերուն վրայ կը մնան ցարդ: «Յետ վախճանին, կը գրէ Տէր-Յովհաննանց, ընկալաւ զգերեզման տաջի հարաւային դրան նոյն եկեղեցւոյ»: Տապանագիրը անոր կուտայ «բարեպաշտ, հաստատհատաւ և քրիստոնէայ» վերագիրները և զայն կ'անուանէ Գէ-

ցիէ տեղեկութիւններ Գէրաք աղայի յաջորդներուն վրայ: Իր թոռը, Յովհաննանց, հեռացած էր Զուլայէն, փախչելով հալածանքներէն — որոնց շրջանը յաջորդած էր՝ հարիւր տարի յետոյ՝ Շահ Աբբաս Ա.ի լայնամիտ քաղաքականութեան — և ապաստանած էր Հնդկաստանի Սուրաթ քաղաքը սւր ժր. դարու վերջին

1. Պատմութիւն նոր Զուլայոյ որ յլլգտիսմ, աշխատասիրեալ ի Պ. Յարութիւնէ Թ. Տէր-Յովհաննանց. սպագրեալ ի նոր Զուլայի սպարանի Ամենափրկչեան Ս. վանուց. 1880—1881. Երկու հատոր: Պ. Կ. Բասմաճեանի մտտենտղարանին մէջ է որ կարող եղայ այս թանկագին մենագրութիւնը գտնելու:
2. Այս գուտար մեռաքի սրտագրութեան զլիսուոր կեզրուն էր Պարսկաստանի մէջ:

1. Գէրաքի վերջաւորական ի ն կրնայ ներկայացնել հայերէն սեռականի մասնիկը, կամ ծագման անուններու պարսկական ձևը՝ ինչպէս Երբաղի, Հէրաթի:
2. Կը յուսած սրիշ տոթիւ մը կարենալ խօսիլ Գեորգ Աղայի, իր կնոջը և երկու որդւոց յախճապակիի վրայ նկարուած պատկերներու մասին, որ կը գտնուին նոր Զուլայի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյն մէջ (Տէր-Յովհաննանց, նոյն գործ, հտտ. Բ., էջ 195—196):

քառորդին մեծահամարու վաճառական մը դարձած էր, իր ազդասիրութեամբ ալ նշանուոր¹ :

Վենետիկ հաստատուած հայ բնամանիքներու համացուցակի մը մէջ, Հ. Ղ. Ալիշան² կը նշանակէ Գէրաք-Միրման բնամանիքը, ծագմամբ Ջուղայեցի և ժիւ. դարէն սկսեալ Իտալիա հաստատուած : Այս գերդաստանին իտալացած սերունդները մինչև հիմա կը գտնուին Լիփորնոյի մէջ³ :

Բաղմահամուտ Միսիթարեանը կը յիշատակէ նաև Առաքել Գէրաքեան մը, նաևատէր կամ նաևաբեա, որուն նաևուն անունն էր Մատոնիտ Տէլլա Փաչէ (Աստուածամայր Աղագուութեան) :

Այս մեծայնները Իտալիոյ մէջ յորինուած ըլլալու են և հաւանորէն Վենետիկ, ուր Գէրաք Աղա շինել տուած էր նաև Ջուղայի եկեղեցւոյն նուիրելիք եկեղեցական պատկերները : Այն իրողութիւնը որ այս մեծայնները Մետիչիններու հաւարածութենէն հուզան, կրնայ բացատրուիլ զորմի յարաբերութիւններով զոր շատ հաւանականաբար Ջուղայեցի վաճառականը ունեցած էր Մետիչիններուն հետ, որոնք երբեք չեն զայրած սեղանաւորութեամբ և առևտուրով զբաղելն՝ նոյն իսկ երբ Փլորանսի մէջ իշխանութեան գլուխն էին անցած : Այդ առևտրական գործողութիւնները կրնան նոյն իսկ տեղի ունեցած ըլլալ անոնց զբաժանուներուն և վաճառատուներուն մէջ Վենետիկի և Լիփորնոյի (այս վերջինը Մետիչիններու նաւահանգիստն էր) : 16րդ դարու երկրորդ կէսէն սկսեալ, Քոստանայի Մեծ Գուքերը թոյլատու վերազարմունք ցոյց կուտային Հրեաներու և այլազաններու հանդէպ, ինչ որ պատճառ եղած էր Լիփորնոյի մէջ բաղմամբի օտարականներու հաստատուելուն : Վենետիկէն յետոյ Լիփորնո

այն իտալական նաւահանգիստն էր ուր ամենէն աւելի Հայերը կը յաճախէին¹ :

Գոյութիւն ունի նաև ժիւ. դարու Ջուղայեցի հայ երեկելի ուրիշ մէկ վաճառական կենդանադիր մը, այն է Յոճա Աւետիքի, որ Ամենուորիկի վանքի եկեղեցւոյն ներքաակողմը դարդանկարել տուած է² : Գրախանն պատկերացման մէջ որ կը գտնուի հարաւային պատին վրայ, կը տեսնուի նուիրատուն խաչափայտը զրկած³ : Ետհետեւ պիտի ըլլար այս զանաւոր պատկերը, որ մտաւորապէս 1661 ին շինուած է, համեմատել Գէրաք Աղայի կենդանադրին հետ և ատոր համար ցանկալի է որ ունենանք այդ պատկերին վերաբաղութիւնը⁴ :

* * *

Այս մեծայններուն պատկերազարկան և կենսազարկան շահեկանութիւնը կազ չունի միմիայն անոնց վրայ ներկայացուած անձին, այլ և այն գասակարգին հետ զոր կը ներկայացնէ ան և պատմութեան այն էջին զոր կ'ոգչանիկա :

ԺՁ. դարուն վերջերը Հայաստան կը կազմէ գիւտարական սահմանը երկու հօր պետութեանց, Պարսկաստանի և Քուրքիոյ : Թաւրիզի, որ բաղմամբի ճամբորդութիւններ կատարած է այդ երկիրներուն մէջ, կ'ըսէ թէ

1. Մեսրոպ վարդապետ Ուղարիան, Պատմութիւն Հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցւոյ մացաի Լիփորնոյ Բաղաբի, վենետիկ 1891 : Տեսնել նաև. Notes de Chahran Girbied sur les Arméniens d'Amsterdam et de Livourne (1811), publiées par F. Macler; extrait d'Anahit, 1904.

2. Պուլսներ-Սիր-Սէն Պ. Ալպէր Բանի բնակարանը ներկայ կը գտնուի Պարսկաստան ճամբորդութեան մը վերաբերող մտական լապտերով գունաւոր պատկերացումանց շարքի մը, երբ ատոնց մէջ անտիկեայն ունեցայ Ջուղայի Ամենուորիկի եկեղեցւոյն ներքաակողմը տեսնուի :

3. Տէր-Յովհաննես, մայն գործ, հատար Բ. էջ 4-5. Ճանթ. 7. և էջ 14 :

4. Այդ եկեղեցւոյն վրայ, որուն ներքաակողմը երեք և կէս կանդնաչափ բարձրութեամբ պատին փակցուած քոտակուսակներով զարդարուած է, կը գտնուին յախճաղակէ արձանազրութիւններ 1664 և 1700 թուականներով : Մոզայ Երկրագործութիւն մը, 1611 յորինուած, նոյնպէս յախճաղակէ, գրուած է Ս. Գէորգ եկեղեցւոյն մտարին : Թէ՛ հայ և թէ՛ պարսիկ արուեստի տեսակետով, իրապէս շահեկան պիտի ըլլար այդ խեցեղործական արտադրութեանց լուսանկարն ունենալ :

1. Տէր-Յովհաննես 1780-1800 Սուրբ գտնուող Հայ վաճառականներու շարքին մէջ կը յիշատակէ Աղա Յովհաննէան Յակոբեան Գէրաքեանց : Յակոբ էր մեր Գէորգ Աղային հորը՝ ինչպէս իր որդիներէն մէկուն անունը :

2. Ալիշան, Հայ-վենետ կամ յարկուրիւմ Հայոց և վենետաց ի ժԹ—Գ, և ժԵ—Ձ դարս, վենետիկ, 1896 :

3. Գերապոյճառ Պահագոնեան որ Լիփորնոյի Հայ կաթողիկէ եկեղեցւոյն ժողովրդագրեան եղած է, ինձի հաստատեց թէ Ջուղայէն սերած ծնութեք կը գտնուին հոն, որ զտէ Գէրաք-Միրման կը կոչուին :

«Թուրքիայի մինչև Թուրքիայի երկիրը գրեթե մի-
միայն քրիստոնեական բնակչություն ունի, և
բոլորովին այս ընդարձակ տարածությունը
նախնական Հայաստանի նահանգը կոչված է,
պէտք է զարմանալ եթէ քաղաքներուն ու
գիւղերուն մէջ մէկ Մահմեդական փոխարէն
չիտուն Հայ կը գտնուի»¹: Իր պետութեան սահ-
մանագրութիւնները ամայի դարձնելու և զէպի
Թուրքիայի թուրք բանակներու պարբերական յա-
տախաղաղացութեանց մէջ անոնց պարենաւորու-
մը արգելելու համար, Շահ Աբրահամ 27,000 հայ
ընտանիքներ, Երիտասարդ ու ծեր, հայր,
մայր ու տղաք, Երեանէն, Նախիջևանէն, Ջու-
ղայէն և Կարսի շրջակայքէն Պարսկաստան
փոխադրած էր²: Ասանցմէ 20,000ը սեղաւորե-
ցին Մաղնիակաւանի մէջ որուն կլիմային չզի-
մանալով գրեթէ ամենքը փճացան: Ջուղայի
և շրջակայքի բնակիչներուն ամենէն պահան-
ջները արուեստան Սպահանի կողմը, և
անոնք մայրաքաղաքին մօտ հիմնեցին Նոր-
Ջուղան: Այդ արժատախիլ եղած ազգաբնա-
կութեանց մէկ մասն ալ ասրաղնուէցաւ Սպա-
հանի և Շիրազի միջև գտնուած զիւղերուն
մէջ³: Այս վերջին խումբը մահմեդականութիւն
ընդունեցաւ դռնէ մասամբ⁴:

1. Թավերնիէ, նոյն գործ, հատոր առաջին, էջ 47-48:
Այս նոտագրութեանը կ'ըսէ նաև՝ «Պարսկաստանի առա-
ջին նահանգը Մեծ Հայաստանն է, զոր մեր քաղաքները
անճանարէն և առանց հիմքի թիրքսմանի (Թուրքսմանա-
ստան) կը կոչեն, բայց զոր աւելի բնաւոր կերպով կա-
րելի էր անուանել ընդհանրապէս Երմէնի, քանի որ
գրեթէ միայն Հայեր են որ հնէ կը բնակին»:

2. Այդ սեղանութեան ընկերացող խժոժութեանց
մասին տեսնել F. Tournebise, Schah Abbas Ier,
roi de Perse et l'émigration forcée des Armé-
niens de l'Ararat.
Յուշարձան, Վիեննա, 1911, էջ 250 և 251:

3. Թավերնիէ, նոյն գործ, հատոր Ա., էջ 53 և 54,
հատ. Բ., էջ 7: Գ. Թուրքուլույ (նոյն գործ, էջ 252),
Հ. Ռաֆայէլ ալի Մանէն և Շարակէն քաղելով կ'ըսէ թէ
500 հայ ընտանիքներ Շիրազի շրջանը փոխադրուեցան,
այդ նահանգի հայ ծագմամբ կուսակալին՝ Ալլահաբեկի
խանի խնդրանքով. «Շիրազի այդ նոր դողթականները,
երկրագործութեան առում իրենց խնամքով՝ բարձրա-
ցուցին համարը Շիրազի այգիներուն որոնց կը սրտկա-
նէր արքայական սեղանին գինի հայթայթելու առանձնա-
շնորհութիւնը»:

4. Թավերնիէ կ'ըսէ. «Մերունները մեծած ըլլալով,
բոլոր երիտասարդները մահմեդականութեան յարեցան»
(նոյն գործ, հատոր Ա., էջ 54): Եւ սակայն, Ջուղայի
թեմին մաս կազմող հայ զիւղեր կը մնան սոսկաւ այդ
շրջանին մէջ, ինչպէս կը տեսնենք Տէր-Յովհաննէսի
գրքէն:

Նոր Ջուղայ հիմնուած է հայկական տո-
մարի 1054 թուին, այսինքն 1605 ին: Այդ
թուականէն առաջ, Հայերը արդէն մեծաքանակ
տեղափոխուելով կը պարսպէին, և Թավերնիէ որո-
շապէս կ'ըսէ թէ Նախիջևանի մէջ, այդ քաղաքը
Մուրադ Գ. ի կողմէ կործանուելէն առաջ,
անոնք մեծաքանակ մեծ վաճառականութիւն կ'ը-
նէին, Տէր-Յովհաննէսից զիտել կուտայ նաև
թէ Խօժա-Նազար, որ յետոյ Նոր Ջուղայի
վաճառականապետ պիտի դառնար, 1593էն իսկ՝
Շահ Աբրահամը հրովարտակ մը ստացած էր
«յազագո սղատութեամբ վարելոյ ի Պարսկաս-
տան գտարեստութիւն իւր»:

Այդ վեհապետը անզախիտած ու նպաստա-
ւորած է սերմն տուտար մը զոր Հայերը
արդէն կ'ընէին, բայց զայն չէ ստեղծած:

«Շահ Աբրահամ ... նկատելով տուտարի
համար Պարսից քիչ օժտուած ըլլալը և թէ
անոնք ի բնէ կը սիրէին սերճանքն ու մսխումը,
ինչ որ յատկութիւնը չէ վաճառականին՝ որ
պէտք է խնայող ու անտեսազէտ ըլլայ, աչքը
զարձուց Հայերուն, որոնք իր սեղանն ընելու
աւելի առակ կը թուէին իրեն: Ըմբռնեց որ
առողջ ու յողնութեան զիմացող մարդիկ էին,
երկար ճամբորդութիւններ ընելու կարող, թէ
չառ ծուծկալ էին կերուխումի մէջ և խնայա-
սէր, և թէ քանի որ քրիստոնեայ էին՝ աւելի
զիւրութեամբ կ'ընային տուտար ընել ամբողջ
քրիստոնեայ աշխարհին հետ»²:

Այս կարծիքը, զոր կը յիշէ և կը հաստատէ
Թավերնիէ, կը բացատրէ այն պատճառները
որոնց համար Շահը հայ վաճառականներուն
մասնաւոր շնորհներ կ'ընէր: Անոնց փոխ կու-
տար մեծաքանակ որոնց զինք անոնք ճամբոր-
դութենէ վերադարձին կը վճարէին³: «Պարս-
կաստանի մէջ վեց ճամբորդութեանց» հեղի-
նակը կը վկայէ թէ «արտաքին վաճառականու-
թիւնը ամբողջապէս Հայոց ձեռքն է, որ կեր-
պով մը թաղաւորին և մեծամեծներուն զործա-
կատարներն են, և ըստ Տէլլա Վալլիի, «Ջու-
ղայեցիք Պարսից թաղաւորին համար այն են
ինչ որ ճինովացիք Սպանիոյ թաղաւորին.
առանց թաղաւորին չեն կրնար ապրիլ, ոչ ալ
թաղաւորը առանց անոնց»⁴:

2. Թավերնիէ, նոյն գործ, հատ. Ա. էջ 53:
1. Թավերնիէ, նոյն գործ, հատ. Ա., էջ 72 և 73:
2. Թավերնիէ, նոյն գործ, հատ. Ա., էջ 54:
3. Թավերնիէ, նոյն գործ, հատ. Բ., էջ 325:
4. Տելլա Վալլի, նոյն գործ, Մաս Գ., էջ 265:

Մանթեպիէօ, իր Պարսկական Նստակնի-
րուն մէջ, Իւզղէքին գրել կուտայ. «Գիտես,
Միրզա, թէ Շահ Սոլեյմանի մէկ քանի նախա-
բարները խորհուրդն յլացած էին ստիպել պե-
տութեան բոլոր Հայերը երկրէն հեռանալու
կամ մահճեալանութեան յարելու, այն մտա-
ծումով թէ մեր պետութիւնը այդ անհաւատ-
ներն իր ծոցին մէջ պարունակելով պղծուած
պիտի մնար միշտ:

«Պարսկաստանի մեծութիւնը պիտի կորչէր,
եթէ այդ ստիպին մէջ կոյր մոխրանդութեան
ձայնը լսուած ըլլար... զիպուածը բանակա-
նութեան ու քաղաքագիտութեան տեղը բռնեց,
և պետութիւնն ազատեց աւելի մեծ վտանգէ մը
քան եթէ երեք ճակատամարտ կորսնցուցած ու
երկու քաղաք վրայ տուած ըլլար:

«Հայերը վտարելով, մէկ օրուան մէջ պե-
տութեան բոլոր վաճառականները և գրեթէ
բոլոր արհեստաւորները ջնջած պիտի ըլլային:
Ապահով եմ որ Մեծն Շահ Աբրահա նախամեծար
պիտի համարէր երկու թեւերը կարելի տալ քան
ստորագրել այսպիսի հրաման մը, անիկա իր
ամենէն արհեստագէտ հպատակները Մեծ
Մոկոյին կամ Հնդկաստանի այլ թագաւորնե-
րուն գրկելը իր պետութեան հոգեբուն կէտը
անոնց տալու համարժէք պիտի նկատէր»:

Այնպէս որ Նոր Զուգայի Հայութիւնը մեծ
բարբորութեան ու փարթամութեան մէջ եղած
է թէ. դարուն¹: Տէր-Յովհաննանց կը գրէ.
«Նա (վաճառականութիւն Զուգայեցոց) եղեւ
այբրին որ գհարստութիւնն զեառըն զեղեալ
եմօյժ ի Զուգայ, որով Զուգայեցիք զբարձրա-
կառոյց և զգեղեցկաչն եկեղեցիս և զթաղա-
ւորափայլ պարտանմա² և զապարանս կառու-
ցանել մարթացան և եղեն ազանաւորք ի մէջ
աշխարհիս»:

Ճանապարհօրդները միաձայն են գովելու
Նոր Զուգայի գեղեցկութիւնը: Հայոց սուսնե-

1. «Այն սուսն (Շահ Աբրահա Մեծի և Սաֆի Ա. ի օրով,
այսինքն 1642) կային անոնց մէջ երկու երեք միլիոն
աննոց վաճառականներ, ինչ որ շատ փոխուած է հի-
մայ (1673-77), թէև կան զեա բնականներ որ մէկ
միլիոնէն աւելի հարստութիւն ունին»։ Շարտէն սուպե-
տին ճամբորդութիւններն ի Պարսկաստան, Փարիզ, 1811,
Հատ. Բ., էջ 106:

2. «Երեք հարաւ շորհինգ հարիւր տուն կայ Զու-
գայի մէջ, գեղեցկադնները ջուրին եղերքն են և կան
որ շատ ճոխարար սակեղծուած ու կազուսաններուած
են և գոր կարելի է պալատ կոչել: Նոյն գործ, էջ 105.

բը, բոս սպանիացի դեսպան Ֆիկուէրօայի
«մեծ մասամբ շատ գեղեցիկ են և հոյակէն,
տանիքներն ու պտակերը նկարագարուած ու
սակեղծուած ի ներքուստ»¹: Թափերնիէ, ճըշ-
տելէ յետոյ թէ Զուգայ, Սպահանի հարաւա-
կորմն է, սաքով կէս ժամու շափ հետու և թէ
Սենտերու (Չինակրուր) գետակը երկու քա-
ղաքներէն գրեթէ հաւասար հեռաւորութեամբ
կ'անցնի, կ'աւելցնէ թէ մէկէն միւսը տանոց
ճամբան ամենագեղեցիկ բանն է որ կայ Սպա-
հանի և ամբողջ Պարսկաստանի մէջ²:

Մետաքսի գործէն, ինչպէս և «գրամի
ստեատր»էն դաս, որ ամբողջապէս Հայոց
ձեռքն էր³, պատուական քարերն ու այժի մագէ
հիւսուածքները⁴ անոնց վաճառականութեան
զլխաւոր առարկաները կը կազմէին: Մասնա-
ւորապէս՝ չուխայ կը ներածէին, և Թափերնիէ
մեկի կը հարստըզ որ իրենց պապարին մէջ,
Սպահանի Մէլլանին մօտ⁵, Անգլիոյ և Հոլան-
տայի չուխաներ և Վենետիկի կարմրագոյն
սուսիկէ կը ծախէին:

Իրենց ստեարական յատկութիւններուն
վրայ կ'աւելնար մեծ ուղղամտութիւն մը, ու-
րուն Փիեթրօ Տելլա վալլէ մէկ օրինակը կու-
տայ յիշելով ուշադրաւ սովորոյթ մը. «բան
մը որ բուսական հետաքրքրաւոր է և շատ
նշանաւոր, այն է որ աղբաներուն բաշխուելիք
և ուրիշ բարեպաշտական գործերուն յատկաց-
ուելիք ամբողջ գրամը Զուգայի քրիստոնեա-
ներու արկղերէն կ'ելլէ, թագաւորը անոնցմէ
փոխ կ'տունէ այդ գրամը, և յետոյ անոնց կը
զարձնէ, իբր գրամ մը որ ամենէն արդարօ-
րէն վստահուածն է, քանի որ իրենց ստեար-
րին ու հնարագիտութեան արդիւնքն է ու հե-

1. Ֆիկուէրօմ, էջ 285:
2. Թափերնիէ, նոյն գործ, Հատ. Բ., էջ 54:
3. Թափերնիէ, նոյն գործ, Հատ. Բ., էջ 221-222:
4. Տէր-Յովհաննանց, նոյն գործ, Հատ. Բ., էջ 165:
5. Տելլա վալլէ այդ Մէլլանին վրայ կը խօսի ինչ-
պէս հրաւայիքի մը, «այդ Մեծ Հրապարակը, որ թա-
գաւորական պալատին ստէն կը դառնա... շորս կազմէն
զարդարուած է կամարակողներով՝ ամենէն գեղեցիկ,
ամենէն ներդաշնակ և ամենէն կանոնաւոր համաշխու-
թեամբ որ կարելի ըլլայ երեսակոյցէ... Թէպէտ նա-
փօնէ հրապարակին սուսները աւելի բարձր են և աւելի
շքեղ, գեղեցկութեան մէջ նախօնէն վար կը մնայ այս
հրապարակէն»։ Տելլա վալլէ, նոյն գործ, Մաս Բ.,
էջ 40-41:
6. Թափերնիէ, նոյն գործ, Հատ. Բ., էջ 47:

տեսարար ամենէն հաճելին պիտի ըլլայ Աստու-
ծոյ սրուն կ'ընծայուի»¹:

Միութիւնն ու համերաշխութիւնը, առա-
քինութիւններ որոնցմէ Հայերը ինքզինքնին
գուրկ կը կարծեն, լայնօրէն ցոյց կը տրուէին
այդ վաճառականներուն կողմէ: Տէր-Յովհան-
եսնց կը կարծէ թէ Ջուղայի վաճառականնե-
րուն բազմաթիւ ըլլալուն պատճառներէն մին
այն էր, որ անոնցմէ «ականաւոր»ները կ'ընկե-
րակցէին փոքր վաճառականներու, որոնց դրա-
մագլուխ փոխ կուտային, շահուն կէտը կամ
մերթ երկու երրորդը իրենց վերապահելով:
Քիչ ատենէն, այս վերջինները իրենց կարգին
«համբուսուոր վաճառական»ներ կը դառնային²:

Ջուղայի Հայոց վաճառականութիւնը շատ
ծաղկեալ վիճակի մէջ մնաց ամբողջ ԺԲ. դա-
րու ընթացքին, յետոյ յիսուն տարուան միջո-
ցին սկսաւ ի յնալ, սեւած ըլլալով մէկ ու կէօ
դար³:

Եւս Արքայի յաջորդները հետզհետէ շեշ-
տուած հակամիտութիւն մը ցոյց տուին դրամը
գտնուած տեղէն առնելու, այսինքն իրենց
մայրաքաղաքին սեմին վրայ հաստատուած
քաղաքէն, կէս մը որ մասնաւորապէս փորձիչ
էր, քրիստոնէաներու դրամնէն:

Եւս Սուլթան Հիւսէյնի օրով (1694-1722)
պարսիկ կառավարութեան ինչպէս և հաւատա-
ուրաց Հայերու կողմէ քրիստոնէից պէմ
մղուած հարձակումները, որ աւելի բուն կը
դառնան, Ջուղայի անհատական գործունէու-
թեան մեծ հարուած մը կուտան⁴:

Վեցերորդ իմամը «Պարսկաստանի մէջ
մացուց սա սովորութիւնը, որու համեմատ
ս և է քրիստոնէայ, Հրեայ կամ կուրդացի, որ
մահակապետութիւն կ'ընդունի, օրէնքը գոյն
կը հստակէ իր ընտանիքին բոլոր հարստութեան
միակ ժառանգորդ, իր եղբայրները և քոյրերը՝
էթէ ունի՝ զրկուած ըլլալով»⁵:

Կարելի է հաւատարացութեան ընծայուած

այսպիսի պարզելի մը հեռանքները երեւոյ-
ցիլ:

1722 ին Աֆղաններու Սոբահան մուաքը, և
անոնց գոյացուցած բեմեր, որ ամենէն բար-
բարուն ու արիւնկազար եղաւ գոր Պարսկաստան
երբեք ճանչցած ըլլայ¹, «Ջուղայի վաճառա-
կաններուն կորստեան գուժարկու պէպքը կազ-
մեցին»²:

Թէպէտ մարդ պիտի փորձուէր հակառակը
կարծել, Հնդկաստանն աշխարհակալող Նատիր
Շահին թագաւորութիւնը (1736-1747), թոյլա-
տու սղույ ու ապահովութեան չըջան մը չե-
ղաւ³: Ընդհակառակն, այդ միջոցին է որ Ջու-
ղայի վաճառականները ցրուեցան, իրենց փր-
կութիւնը օտար երկիր փախուտի մէջ փնտե-
լու հարկադրուած, զլիսաւորապէս Հնդկաստան
և Ռուսաստան⁴: Այսպէս, թագերը կը պար-
պուէին և լքուած աստիճաններուն թիւն այլ ևս կա-
րելի չէր համրել: Տէր-Յովհանեսնց կ'ըսէ թէ
«Թագաւորութիւն Նատիրի Եղև ժանտախտ
վաճառականաց»:

Ազգայնակութիւնը, քամուած և աղքատա-
ցած, քիչ յետոյ այլ ևս ի վիճակի չէր վճարելու
արտակարգ հարկերը որ իր վրայ դրուած էին.
ուստի վանքերու և եկեղեցիներու ոսկի և ար-
ծաթ սրբազան անօթներուն աչք նետել սկսան
իշխանութիւնները (1756)⁵: Հայերը ստիպուած

1. Սրբ Տօն Մայօլմ, Պատմութիւն Պարսկաստանի,
Փարիզ, 1821, Հատ. Գ., էջ 61:

2. Տէր-Յովհանէսնց, նոյն գործ, Հատ. Ա., էջ 185:

3. Թամպուր նուագող Հայ մը, Թամպուրի Արութիւն,
որ, Նատիր Շահի ծառայութեան մէջ էր և անոր հետե-
ւեցաւ իր Հնդկաստան մղած պատերազմներուն մէջ,
օրագրութիւն մը ձգած է ուր կուտայ այդ Շահին վե-
րաբերող իրականէն անուած յատկանշական մանրու-
մանութիւններ: Անոր գահակալութեան ատեն, մունե-
ակիները ս'ըղէս թէ 4 որ յաջորդաբար ծանուցեր են թէ
Շահը Աիւնի մահակապետ է, յետոյ՝ Շիի, Հայ
Հրեայ, որպէս զի այդ այլազան դատանքներուն պատ-
կանող իր հպատակներուն հակցնէ թէ անոնք իր աչքին
հաւատար են: Այս հետաքրքրաշարժ օրագրութիւնը, հայ
առաերով բայց թուրք լեզուով գրուած, հրատարակուած
է Վենետիկ, 1880 ին: Եւստի Պրթին փաշա անոր
Ֆրանսերէն թարգմանութիւնը առաւ Bulletin de
l'Institut Egyptien ի մէջ և ասանմին հրատա-
րակութեամբ:

4. Տէր-Յովհանէսնց, նոյն գործ, Հատ. Ա., էջ
185-186:

5. Տէր-Յովհանէսնց, նոյն գործ, Հատ. Ա., էջ 288:

1. Տեղիս վայլէ, նոյն գործ, Մաս Գ., էջ 151-152:
2. Տէր-Յովհանէսնց, նոյն գործ, Հատ. Բ., էջ
160-161:
3. Տէր-Յովհանէսնց, նոյն գործ, Հատ. Ա., էջ 172:
4. Տէր-Յովհանէսնց, նոյն գործ, Հատ. Ա., էջ 185:
5. Թավիբնիէ, նոյն գործ, Հատ. Բ., էջ 81-82:

հղան ձևը գոյցնել սկիհներուն, խաչերուն, բուրբառներուն, աշտանակներուն, տապանակներուն, զոր հալեցուցին, ինչպէս և սակհուսեկեղեցական գրեհաններուն, զոր կ'այրէին անոնց արծաթը ժողովելու համար: Հարիր վախճան երկու շուրջառ այսպէս փճացած են:

Ատեփանոս Երկն այս հարստահարութեանց ի տես կր դրէ. «Ձալս ամենայն լսելով և տեսնելով և զբերով մեր՝ սարսեալ սասանի անձն մեր, ճմիրն սիրաք և զարարին աղիք որովայնի մերոյ, և աչք մեր զվտակս արտատուաց իջուցանեն վասն եկեալ հասեալ թշուառութեանս մեծի առ մայրն մեր Ս. Եկեղեցի»:

Ճէթ Ալի Ծահի դահակալութեամբ (1797), Նոր Ջուղայ վերստին կր գանձ խաղաղութիւն, եթէ ոչ բարորութիւն:

Եթէ Ջուղայի վաղանցուկ շքեղութիւնը շատ սուղի նստաւ, — քանի որ Մագէնտէրան փոխադրուած 20,000 բնտանիքներ դրեթէ ամենքն ալ կտրան, — այսու հանդերձ ան ունեցաւ հեռաւոր ու խորունկ անդրադարձումներ հայկական կեանքին մէջ: Հնդկաստանի դաղուծը, որ ատենով այնքան ծաղկեալ չըջան մը ունեցած է, Ջուղայի դաղութիւն մէկ շտապիցն է, և Սուրբի մէջ մենք գտանք Գէրաք Ազայի թոռ՝ ԺԸ. զարու վերջերը:

Այս լուսամբա և վեհանձն հայրենասէրները որ Մխիթարեանց յանձնած իրենց կտակներով հնարաւոր դարձուցած են, անցեալ դարու առաջին կէսէն իսկ, հիմնարկութիւնը Մուրատեան Վարժարանին, Փատուայի՝ յետոյ Փարիզի մէջ, և Ռափայէլեան՝ Վարժարանին՝

Վենետիկի մէջ, փարժարաններ որոնց զերր ունիւրան մեծ Եղամ է թուրքիոյ Հայոց մտաւորական վերականգնման մէջ — Մատրաս հաստատուած վաճառականներ էին:

Արեւելեան լեզուաց Լազարեան ձեռարանը, Մոսկուա հիմնուած 1814 ին, որ հայկական կրթութիւն մը սուտած է սուսահայ քանի մը սերունդներու և որ նոյն տուն հայալիտական ուսումնասիրութեանց կեդրոն մը հղած է, իր հիմնարկութիւնը կր սրարտի Ջուղայէն սերած զերգաստանի մը:

Այսպէս, Պարճէլլոյի մեռալլներուն նշանակութիւնը կր մեծնայ յայտն տակ Ջուղայի պատմութեան և այդ յանդուպն վաճառականներուն գործունէութեան անուղղակի հետեւանքներուն որ մինչև մեր օրերը կ'անդրադառնան:

1. Պէրիկթաշիան (1828-1868) և Թէրզեան (1840-1900) բանաստեղծները իրենց ուսումը ստացած են, մին Փատուայի և միւսը Վենետիկի վարժարաններուն մէջ: Այդ կրթական հաստատութեանց աշակերտներուն ազդեցութիւնը, իրենց հասարակութեանը գործը, տարածուած է նաև թուրքիոյ և Պարսկաստանի Մահմադականներուն, որոնց վրայ Եւրոպայէն զարձաղ այդ երիտասարդները մէկ քանի սերունդի յոտաջնացութիւն մը սեւեղին: Միքայէլ Փորթուզոյ (1842-1897) Պոլսոյ Միլիթի վարժարանին մէջ ստեղծած է թուրքերէն լեզուով ելմտադիտութեան առաջին բեմը, և Յովհաննէս Սալբղեան (1836-1912) նոյն պետական վարժարանին մէջ ստեղծած է քաղաքական տնտեսութեան և վարչական իրաւագիտութեան բեմերը և առաջին անգամ բլլարով, դարձեալ թուրքերէն լեզուով, Գեղարեւոսից Վարժարանին մէջ գեղեցիկագիտութեան ներածութեան գաստանդութիւն մը ըրած է: Երկուքն ալ յաջորդաբար, երկար տարիներ, Ազախլի Համիա Բ.ի օրով, կայսերական գանձուս և կալուածաց նախարարի պաշտօնը կատարած են և ստացած են Վեդերի աստիճանը որ բարձրագոյնն է Օսմանեան դատակարգութեան: Իշխան Մելիքան Խան (1832-1908), որ Միքայէլ Փորթուզոյ փաշայի և Յովհաննէս Սալբղեան փաշայի պէս աշակերտ մըն էր Փարիզի Մուրատեան վարժարանին, միայն փայլուն գիտական մը չէ Եղամ, այլ և Պարսկաստանի մէջ քաղաքական զեր մը կատարած է:

1. Տէր-Յովհաննէս, նոյն գործ, Հատ. Ա., էջ 289:

2. Ստեփաննոս Երեց ի գեղջէն Հաղաբէրիոյ, ձեռագիր պատմութիւն, 1665-1814. յիշատակուած Տէր Յովհաննէսի, նոյն գործ, յոտաջարան: Այդ Հաղաբէրի գիւղը Ազախանի և Ծիրազի միջև գանձուղ գիւղերէն մին է որ գետեղուեցաւ Ծահ Արբասի տեղահանման Հայոց երրորդ խումբը և որոնց մասին խոսեցանք վերեւ:

3. Երուանդ Ռափայէլեան, վախճանած 1791 ին, և իր փեսան Սամուէլ Մուրատ, 1760-1816: Մուրատեան վարժարանը հիմնուած է 1834 ին Փատուա և Փարիզ փոխադրուած է 1846 ին, և հոն պահպանուած է մինչև 1871: Ռափայէլեան գործը հաստատուած է Վենետիկ, 1836 ին և քարղ գոյութիւն տան հոն:

2. Եթէ Լազարեանց մեծանուն տան մէկէլ տուրի անդամները մտածակցած են Մոսկուայի հոգալուոր ձեռարանին հիմնարկութեանն ու նորոգմանը, նախանշանութիւնը կր պատկանի Յովհաննէս Լազարեանցի և իրականացումը Յովակիթի (1743-1826):

Մենէ շատերը անոնց պարտական են բարոյապէս, թէպէտ անուղղակի կերպով, և պէտք է շնորհապարտ ըլլալ Գէրաբ Ազալի — նոյն իսկ եթէ անապարձութեան զգացումով մը մղուած է — որ դրոշմել տուեր է այս մետայլները որոնք մեր աչքին կը խորհրդանշեն դասակարգ մը, որ շնորհիւ իր խելացութեան, պարկեշտութեան և աշխատասիրութեան, յաջողած է, ամբողջ դարու մը ընթացքին, փայ-

լիւ սրտին մէջ իսկ մահմետական Պարսկաստանին¹:

Մօնտօրանսի

ԱՐՄԵՆԱԿ ՍԱԳՐՁԵԱՆ

1. Մետարակուսի է, կը դրէ Պ. Սթրեք, Մահմետական Համայնագիտարանին մէջ՝ Զուգայ բառին, որ այդ զաղթականութեան զործունեայ, ձեռներէց ու հարստ Հայերն են որ Ապահանի հօր փաճառականութեան բարգաւաճման հիմունքը դրած են:

ՊԱՂԱՏԱՆԷ ԱՌ ԼՈՒԻԹԻԻՆ

Մ'ա, ա'ն ինծի աչքիդ մէջ ու զերդ երազ մը օրրէ՛.
Տո'ւր ձեռքերուս՝ ձեռքերուդ գգուանքն անուշ բուռ առ բուռ:
Ամենուրեք կըրեցի՝ չպատկերն ևս քու խնկարոյր
Կուրծքին վըրայ իմ հոգւոյս խաչի մը պէս արծաթէ. . . :

Ամէն անցորդ կապեց ցաւ մ'իմ հոգիիս Ըիւզերուն,
Ինչպէս ծառի մ'հաւատքի ջուրի մը վրայ խոնարհած.
Իմ հեծկտուրքս եղաւ նրման լոյսի ճր առկայծ,
Եղեղ մ'անտես նետ առ նետ ծեծեց ինծի օրն ի բուն. . .

Սիրաբա շերտ շերտ հացի պէս ևս բամենցի անխընայ
Սովալըլուկ սըրտերուն. . . ու սովամահ ևս մեռայ. . .
Ոչ ո'ք, ոչ ո'ք երկարեց ձեռք մ'ինծի չար կամ բարի. . .

Լոյսը աչքիդ՝ աչքիս մէջ, ծաղիկի պէս կը բացուի . . .
Դողին ցնցուղն սկիզբօ՞՞ գեռ կ'անծրեւէ տարտագին.
Ա՛ն հանգոյցէ՛, հանգոյցէ՛ իմ հոգիս քո'ւ հոգիին . . . :

Վարապր 1929

ԱՐՇԱՄ ՏՍՏԵԱՆ